



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Յո-նո-ար

2017
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

ԹՎԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

բանասիրական գիտ. դոկտոր, ՀԱԻ

**ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՏՈՒՆԸ
ՀԱՅՈՑ ԲԱՆԱՅՈՒՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵՉ**

Սողոմոն Իմաստունի անվան եւ հռչակի տարածումը քրիստոնյա աշխարհում եւ մասնավորապես հայոց մեջ պայմանավորված է Սուրբ Գրքի մոտիվներով: Հին Կտակարանում Սողոմոնը Իսրայելի Դավիթ թագավորի տասներորդ որդին է՝ ծնված Բերսաբեից, ով իր հոր կամքով գահակալել է Իսրայելում եւ Հուդայի երկրում¹ ու լինելով բացառիկ խաղաղասեր ու արդարադատ թագավոր՝ արժանացել է ժողովրդական բոլոր խավերի սիրուն ու ակնածանքին: Դրա ապացույցը բազում գրույցներն ու հեքիաթատիպ առակներն են², որոնք մեզ են հասել Հայաստանի պատմագրագրական տարբեր շրջաններից՝ ինչպես բանավոր ավանդու-թյամբ, այնպես էլ ձեռագրերով:

Սողոմոն թագավորին, ում հրեաները համարում են գերագույն իմաստուն, ավանդաբար վերագրվում է Աստվածաշնչի Հին Կտակարանի երեք՝ «Առակների», «Ժողովողի», «Երգ երգոցի» եւ մի շարք սաղմոսների, ինչպես նաեւ «Սողոմոնի իմաստության» գրքերը հեղինակելու պատիվը³:

¹ Գ. Թագ. Ա. 35:

² Ժողովրդական ավանդության մեջ վերոնշյալ ժանրերը հստակորեն տարանջատված չեն, հաճախ հեքիաթն իր մեջ ներառում է գրույցին եւ առակին բնորոշ բազմաթիվ տարրեր կամ հակառակը:

³ «Իմաստության գրքի» եբրայական բնագիրը չի պահպանվել: ԺԲ. դարի ակնավոր եկեղեցաքաղաքական ու գրական գործիչ Ներսես Լամբրոնացին իր «Մեկնություն Սողոմոնի իմաստության» աշխատությունը սկսում է այսպես. «Վերնագրից իմանում ենք, որ գիրքը Սողոմոնին է». եւ ապա խոսելով այն մասին, որ Եվսեբիոսն իր «Եկեղեցական պատմության» մեջ վկայում է «Իմաստության գրքի» հեղինակի հետ կապված տարաձայնությունների մասին, հավելում է, որ չի հաստատվել այն կարծիքը, թե Սողոմոնը չէ սրա հեղինակը, մասնավորապես որ, մեր վարդապետները, «տեսնելով մտքի պայծառությունն ու իմաստի խորությունը», շատ նմանություններ են գտել վերոնշյալ նախորդ գրքերի հետ, իսկ նկատված տարբերությունները բացատրել են «իմաստության այն Հոգով», որով գորացած Սողոմոնը կարող էր շքեղագարդել իր իմաստությունը «գույների զանազան

Մեսրոպյան երկաթագիր տառերով առաջին հայերեն նախադասութիւնը Մաշտոցն իր աշակերտների հետ թարգմանել է Սողոմոնի առականերից. «Ճանաչել զիմաստութիւնն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» («Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը»)⁴, «Արդարեւ, ով անարգուժ է իմաստութիւնն ու խրատը, թշուառական է. ունայն է նրա յոյսը, անօգուտ է նրանց վաստակը եւ պիտանի չեն նրանց գործերը»⁵:

«Հայերը, ինչպէս եւ արեւելեան շատ ազգեր սիրել են այլաբանութիւն, զրոյց, սրամիտ ասացածքներ եւ մանաւանդ առականեր: Առականոր խօսակցութիւնն այդ ժողովրդի սիրած ձեւն է եղել, եւ է այժմ իսկ»⁶:

Հայ ժողովրդի բանահյուսական կենցաղում հեքիաթների մի խումբ, որն ավելի շատ մոտենում է զրույց-առական, առնչվում է միջնադարյան առասպելական բժիշկ եւ իմաստուն Լոխմանի գործունեութեանը եւ հայտնի է նրա անունով. «Բժիշկ Լոխման», «Լողմանն ու հասարակ մարթը», «Լողմա հեքիմ», «Լողմանին դարդի վա կյամ», «Լողմանի տղեն ու գեղացին», «Լողմանին նան չոբանը» եւ այլն: Դրանց մի խումբն էլ առնչվում է այլ անուններով հայտնի կամ պարզապէս անանուն բժիշկ-իմաստունների գործունեութեանը. «Դալի Սելիմ», «Ճուկօ եւ Ճէյրան», «Ավլի Ահմադ», «Շահ Մարան», «Ջօբանա նաղլը», «Վիշապ եւ Վաթան ու Բաթան», «Կարմիր ծովի նաղլը», «Թաքավեր ծուկներ» եւ այլն⁷: Պակաս ուշադրով չէ հեքիաթատիպ առականների երրորդ խումբը, որը, արաբական առածների ու առականների միջոցով լայնորեն տարածված լինելով Արեւելքում, ընդհանրութիւններ է դրսեւորում մի կողմից Լոխմանի կամ անանուն իմաստունի, մյուս կողմից՝ Եզդպուսի, Խիկարի եւ Սողոմոն իմաստունի առականների եւ զրույցների հետ:

Հատկանշական է, որ Սողոմոն Իմաստուն եւ Իմաստուն բժիշկ Լոխման զուգահեռները հայ բանահյուսութեան մեջ ընդհանրութիւններ են դրսեւորում նույնանման դիպաշարերի համատեքստում:

տեսականերով» (Ն. Լամբրոնացի, Մեկնություն Սողոմոնի իմաստության, համեմատական քննադիր կազմեց եւ աշխարհաբար թարգմանեց Գ. Ս. Մնացականյանը, Երեւան, 2004, էջ 17):

⁴ Առակ. Ա. 2:

⁵ Իմաստ. Գ. 11:

⁶ Վ. Փափագեան, Պատմություն հայոց գրականութեան սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, 1910, էջ 205:

⁷ Այդ մասին մանրամասն տես Թ. Հայրապետյան, Բուժման ծիսահմայական եւ կենսաֆիզիկական ցուցիչները հայ ժողովրդական հեքիաթներում, ՊԲՀ, 2006, թ. 2, Երեւան, էջ 167-186:

Արցախից գրառված «Լոդմանին նան չոբանը»⁸ հեքիաթում Լոխմանը մի հարուստ մարդ է, ով ծառայությունից վերադառնալիս ձի է վարձում՝ իր բեռներն ու ճամպրուկները տուն հասցնելու համար: Այստեղ նրան անվանում են Լոխման, ու թեև չի երևում նրա մատուցած ծառայության բնույթը, բայց պարզորոշ խոսվում է նրա իմաստուն լինելու մասին («չատ պեն գլիդող»)⁹:

Ծանապարհին հոտի մեջ արածող մի հղի կովի նայելով՝ Լոխմանը սկսում է ծիծաղել: Ձիատերը վրդովվում է, պահանջում բեռներն իջեցնել՝ կարծելով, թե Լոխմանը իրեն ծաղրում է այն բանի համար, որ ինքը առողջ-փառք ձիու վրա նստած գնում է, իսկ ձիատերը հանուն վարձի ոտքով հետևում է իրեն: Լոխմանը ստիպված բացահայտում է երեւոյթների խորքը թափանցելու իր ունակությունը՝ խոստովանելով, որ իր ծիծաղի պատճառը վերոնշյալ կովն է, որը մի ժամ հետո ճիշտ իր նման ճերմակ ճակատով հորթ է ծնելու: Չոբանը, զրույցին խառնվելով, հակաճառում է, թե ծնվելիք հորթի պոչն է ճերմակ, որը ծաղված է ճակատի վրա: Վեճը հանգուցալուծվում է «իրեք հազար մանեթ» գրազով, որի համաձայն՝ կովը մորթվում է: Չոբանի ասածը հաստատվում է: Տեսնում են, որ «դանան մորը փորումը հնքից ծաղած, ճրկատեն տիրած, դրենն ճակատը սիպտակ չի, հնքից ա սիպտակ»¹⁰: Դրան հաջորդում է Լոխմանի զարմանք-խոստովանությունն առ այն, որ ինքը, լինելով աշխարհ տեսած, շատ կարգացած մարդ, պարտվեց մի հասարակ չոբանից, որը, պարզվում է, պակաս իմաստուն չէ:

Հեքիաթատիպ առակ-զրույցի հիմնական սյուժեին հաջորդում է մի մոտիվ, որը դրսևորվում է հարուստ-աղքատ, իմաստուն-իշխանավոր հակադրության համատեքստում եւ չոբանի շուրթերով վերագրվում է նախախնամությանը¹¹. «Պեճնն տոն ա կյամ, վրեր ես քրզանա շատ րմ գլիդող, էն վախտը, վրեր ես ու տու մորա իլալ ընք, մին պարի սհաթ ա իլն, մին իմաստուն սհաթ, ամմա տու ինիլիս վախտը վրեխճարն հորնն վրեննավը հորնն պոզն ա քորալ, իմ փայրս վրեսկուռն ա ինգյալ, քունը՝ տիմակը նան եղը, տրա հետե յէլ ես չըրչըրվելավ, քնսիք պիտի ապրիմ, տու՝ համ

⁸ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), հ. VII, Երևան, 1979, էջ 167-168:

⁹ Լոխման (Լոդմանի) կարող է նշանակել կամ բժիշկ, կամ իմաստուն, կամ էլ երկուսը միասին, նայած թե ինչպես է զարգանում բանահյուսական նյութի սյուժեն:

¹⁰ ՀԺՀ, հ. VII, էջ 168:

¹¹ Ե. Զաքարյան, Հիվանդության եւ բուժման առասպելությոյթը հայկական հեքիաթներում, թեկն. ատենախոսություն, Երևան, 2011, էջ 85-86:

դինջ, համ հարուստ»¹²: Նմանատիպ մեկ այլ՝ «Խիկարի պատասխանը»¹³ դիպաշարում նախախնամովթյան վերոնշյալ մոտիվը, որպես առանձին միավոր, անկախ Լոխմանի եւ հովվի գրազի պատմությունից, կապվում է Խիկար իմաստունի անվան հետ: Թագավորի այն հարցին, թե «Ինչի՞ խելքով լիք մարդիկ գանձով դարդակ են լինում, օրինակ դու, իմաստուն ես ու աղքատ»¹⁴, Խիկարը պատասխանում է, որ այդ ամենի մեջ մեղավոր է աստղը, ամեն մարդ աշխարհ է գալիս մի աստղի տակ, որն էլ հենց իր բախտն է¹⁵, «...որ գիտուն, իմաստուն մարդի ծնունելու ըոպէին նրա բաղդի աստղը այծի չոր պոզի վրա է ընկել, իսկ թագաւոր մարդի ծնունելու ըոպէին նրա բաղդի աստղը ոչխարի տխլիկ դմակի վրայ: Այդ պատճառով ինձպէսները աղքատ ու դարդակ են գանձի կողմից, ինչպէս այծի չոր պոզը, իսկ քեզպէսները հարուստ ու լիքն են, ինչպէս ոչխարի փափուկ դմակը»¹⁶:

Իսկ «Յորժամ Սողոմոն գտաճարըն շինեաց»¹⁷ գրույցը մի կողմից հիշեցնում է Սողոմոնի իշխանությունից շրջանը, որը նշանավորվում է մասնավորապես Աստծու տան՝ Տաճարի եւ թագավորական պալատի կառուցումով, մյուս կողմից՝ «Լողմանին նան չորեանը»¹⁸ հեքիաթը՝ մի տարբերությունով, որ գրույցում հերոսը Սողոմոն իմաստունն է, հեքիաթում՝ Լոխմանը, իսկ գրազին փոխարինում է Սողոմոն իմաստունի կառուցած տաճարի գինը ճիշտ գուշակելու պահանջը: Շարունակությունը համընկնում է աստղատան խոյի՝ դմակը կամ եղջյուրի տակը քորելու եւ կովի փորում գտնվող հորթին նկարագրելու պատմությանը: Վերջինիս համառոտ նկարագրությունը կարելի է տեսնել նաեւ Ե. Լալայանի՝ Բորչալուի գավառից գրառած սյուժեում¹⁹:

¹² ՀԺՀ, հ. VII, էջ 168:

¹³ Ս. Քամալեանց, Ծերերի զրոյցներից, Թիֆլիս, 1911, էջ 4-5:

¹⁴ Նույն տեղում, էջ 4:

¹⁵ Նույն տեղում: Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ «Ոչ միայն երջանկությունը, հարստությունն ու աղքատությունը, այլև մահը, փառքը, ուժը, իմաստությունը, ամեն չարն ու բարին կախված է աստղից» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է., Երեւան, 1975, էջ 47):

¹⁶ Ս. Քամալեանց, նշվ. աշխ., էջ 4-5:

¹⁷ Ն. Իսկանդարյան, Սողոմոն իմաստունը հայ ժողովրդական բանահյուսության մեջ, «Գարուն», թ. 3, 2000, էջ 32: Զրույցը ՄՄ թ. 2939 անտիպ ձեռագրից քաղել եւ միջին հայերենից արդի հայերենի է վերածել Ն. Իսկանդարյանը (ձեռագրի թվայնացված տարբերակում՝ թերթ 418բ):

¹⁸ ՀԺՀ, հ. VII, էջ 167-168:

¹⁹ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երեւան, 1969, թ. 794, Գ., էջ 341:

Նախախնամության վերոնշյալ մոտիվը առկա է եւ՝ Լոխմանի, եւ՝ Սողոմոն Իմաստունի հետ կապված պատումներում, որոնք կարծես միեւնույն ավանդույթի երկու տարբերակային դրսեւորումներ են, իսկ ինկար իմաստունի պարագայում այն հանդես է գալիս ինքնուրույն՝ իբրեւ հիմնական սյուղե, որի շուրջ էլ հյուսված է գրույցը:

Ըստ Աստվածաշնչի՝ Սողոմոնը լուսավորյալ արքա էր: Խաղաղություն էր տիրում նրա երկրում եւ շրջակա բոլոր կողմերում: Թագավորները մարդիկ էին ուղարկում՝ լսելու նրա իմաստնությունը. նա երեք հազար առակ եւ հինգ հազար օրհներգություն է գրել, պատմել է ծառերի, կենդանիների, սողունների, թռչունների ու ձկների մասին²⁰:

Ժողովրդական գրույցներում նույնպես «Սողոմոնն այնպես իմաստուն էր, որ բոլոր թռչունների լեզուն հասկանում էր»²¹: «Պատմութիւն Սողոմոնի վասն հպարտութեան»²² գրույցում նշվում է. «Այլեւ գաղանս եւ զթռչունս գային առաջի նորա եւ ամենայն ազգ կենդանեաց յամենայն աւուր ի հնազանդութիւն»²³:

Հայոց բանավոր ավանդույթի մեջ Լոխմանը նույնպես հասկանում է կենդանիների, թռչունների ու բույսերի լեզուն²⁴: Այրարատից գրառված «Լողմա հեքիմ»²⁵ հեքիաթում կարմիր օձի «յաղուն» խմելով՝ հասարակ մարդը դառնում է նշանավոր բժիշկ «Լողմա». «Ինչ քար, ինչ քոլ խոսում էր՝ նա իմանում էր: Ամեն մի քոլը ասում էր, թե ես էս բանի դեղ եմ, էնպես որ, ինչ թավուր դեղ ուզենար, կարար չինի»²⁶: Նույնը տեսնում ենք Չարսանճագի բարբառով գրառված «Բժիշկ Լոխման» հեքիաթում, որտեղ օձերի Շահ Մարար (Շահմար) թագավորը, հասարակ որսորդ տղային բույսերի ու խոտերի բուժիչ հատկությունների մասին գաղտնիքներ փոխանցելով, նրան դարձնում է իմաստուն բժիշկ²⁷: Իսկ Աարեն-Թոմփսոն-Ութերի հեքիաթների միջազգային նշացանկի ATU-670 տիպին համապատասխանող

²⁰ Գ. Թագ., Դ. 31-34:

²¹ Ս. Քամալեանց, նշվ. աշխ., էջ 36. Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., թ. 794 Է., էջ 344-346: Հայ դասական գրականության մեջ նույնպես տեղեկություններ են պահպանվել Սողոմոն Իմաստունի գաղտնատեսության շնորհիվ մարդկանց հիվանդությունները բուժելու մասին (տես Ղ. Աղայան, Երկերի ժողովածու չորս հատորով, հատոր 1, Երևան, 1962, էջ 19-20):

²² ՄՄ, ձեռ. թ. 6951, թ. 134ա:

²³ Նույն տեղում:

²⁴ ՀԺՀ, հ. III, Երևան, 1962, էջ 338-342, հ. VII, էջ 167-168, հ. XVI, Երևան, 2009, էջ 409-418:

²⁵ ՀԺՀ, հ. III, էջ 338-342:

²⁶ ՀԺՀ, հ. III, էջ 339:

²⁷ ՀԺՀ, հ. XVI, էջ 409-418:

Հայկական (14 տարբերակ)²⁸ «Քաջանց թագավորի խեքյաթ» (Տուրուբերան-Հարք), «Խասմե նեճըրվան» (Տուրուբերան-Մուշ), «Օվչի Փիրում» (Արցախ), «Ավչի Ահմադ» (Գեղարքունիք) եւ այլ հեքիաթներում, թեեւ Սողոմոնի կամ Լոխմանի մասին ուղղակիորեն չի խոսվում, սակայն խաղարկվում է կենդանիների, թռչունների, բույսերի լեզուն հասկանալու աստվածաշնչյան մոտիվը²⁹, ինչով էլ օժտված են վերոնշյալ իմաստունները:

«Օվչի Փիրում»³⁰ հեքիաթում օձերի թագավորի լեզվի տակի մատանուն տիրանալով՝ հասարակ որսորդը «լոխ հըյվըններին, ղուշերին, աշխարքիս կենթանիններին լիւզում գլխուղում ա»³¹:

«Յաղագս Սողոմոնի երազ տեսնելը...»³² զրույցում Սողոմոն արքան երազում երկնքից կախված մի սպիտակ վահան տեսավ՝ վրան մի սպիտակ կենդանի, որին հափշտակեց արծիվը: Գիտուն մարդիկ չկարողացան մեկնել երազը: Սիբոտ անունով դեւը, մի կճուճ ոսկի ստանալու պայմանով, պատասխանեց, որ սպիտակ վահանը աշխարհն է, սպիտակ կենդանին՝ ճշմարտության խորհրդանիշը, իսկ արծիվից հափշտակված սպիտակ կենդանին նշանակում է, որ ճշմարտությունը վերացավ դեպի երկինք:

«Սողոմոնն ասաց նրան.

- Երեք օր հետո կգաս, կտամ քեզ ոսկին:

Երբ դեւը երեք օր հետո եկավ, Սողոմոնը հրամայեց կճուճը լցնել քարով ու նման բաներով, իսկ վրան՝ մի քիչ ոսկու տաշեղներ: Փակեց եւ դրեց սնարի կողքին: Եվ եկավ դեւն ու ասաց.

- Արքա՛, ու՞ր է իմ ոսկին:

Սողոմոնն ասաց.

- Վերցրո՛ւ եւ գնա՛:

²⁸ ՀԺՀ, հ. III, էջ 503-504; էջ 335-337, հ. V, Երեւան, 1966, էջ 218-222, հ. VI, Երեւան, 1973, էջ 623-624, հ. VII, էջ 192-193, էջ 214, հ. X, Երեւան, 1967, էջ 80-82, հ. XI, Երեւան, 1980, էջ 312-317, հ. XIII, Երեւան, 1985, էջ 188-196. Հայ ազգագրություն եւ բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 14, Գեղարքունիք, Ռ. Գրիգորյան, Երեւան, 1983, էջ 100-101, ՀԱԲ, հ. 16, Մուսա լեռ, Վ. Սվազյան, Երեւան, 1984, էջ 58-59, Գ. Սրվանձոյանց, հ. 1, Երեւան, 1978, էջ 465-467, Բիրական, 1899, Կ. Պոլիս, էջ 386-388. ԱՀ, գիրք XXV, Թիֆլիս, 1914, էջ 151-154:

²⁹ Բնության գաղտնիքներին տիրապետելու ունակությունը աստվածատուր է (Մ. Элиаде, Шаманизм, Киев, 1998, с. 79). «Արություն եւ Մանվել» վեպում «Արությունի աստղը հինգերորդ կենդանակերպն էր, որ էր Ադյուծը: Բացեց Ադյուծը, որ տեսնե, թե այդ կենդանակերպի տակ ծաված մարդի ցավին ինչ դեղ է ասել դեւը Սողոմոնին» (Ղ. Աղայան, նշվ. աշխ., հատոր 1, էջ 20):

³⁰ ՀԺՀ, հ. V, էջ 218-222:

³¹ Նույն տեղում, էջ 220:

³² ՄՄ, ձեռ. թ. 2939 (ձեռագրի թվայնացված տարբերակում՝ թերթ 340ա):

Հավատաց դեւը, առավ եւ գնաց: Եվ երբ բացեց կճուճը, տեսավ, որ ամբողջովին ոսկի է, ասաց.

- Այդ հարցում խաբեցիր:

Սողոմոնն ասաց.

- Քեզանից սովորեցի: Դու՛ ասացիր՝ ճշմարտությունը վերացավ երկինք»³³:

Նուբար նանի պատմած «Սուղումուն իմաստունը»³⁴ (Արցախ) հեքիաթում Սողոմոնը երազում տեսնում է, որ «երգյինքան մին աղվեսի ֆյաթի յա կախ ընգած»³⁵, ինչն էլ գյուղացին օձի օգնությամբ մեկնաբանում է, որ Սողոմոն թագավորի երկիրը լի է խաբեբայությամբ եւ խորամանկությամբ, մեկ այլ դեպքում՝ «երգյինքան մին թոր ա կախ ընգած»³⁶, ինչը նշանակում է, որ արյունահեղություն ու կոտորած է սպասվում, երրորդ անգամ՝ «երգյինքան մին ըլլբբստրակի կլիֆ ա կախ իլլծ»³⁷, ինչը հաշտություն ու խաղաղություն է խորհրդանշում:

«Սողոմոն իմաստունի գաղտնիքները»³⁸ գրույցում Սողոմոնն իր փորձառությունն ու գիտելիքները կիսում է մի թագավորի հետ, որն իր տեսածից ոչինչ էլ չէր հասկացել, եւ հանդիմանում է՝ փորձելով նրան մոտեցնել ժողովրդին.

«Թաքավորը ապրած կենա, ճանապարհին ի՞նչ տեսար, - հարցնում ա Սողոմոնը:

- Ինչ տեսա-չտեսա, ոչ մի բան չհասկացա, - ասում ա թաքավորն ու պատմում իրա տեսածները:

Իմաստուն Սողոմոնը սկսում ա թաքավորին մին-մին բաց անել իրա գաղտնիքները:

- Էն որ ջրաղացը աղում ա, իսկ ալյուրը ջուրը տանում ա, էտ թաքավորն ու ժողովուրդն են. ժողովուրդը աշխատում ա, թաքավորը ծախսում, ջուրը ածում: Երկրորդը, էն որ երկու եզը մի գերան են քաշում տարբեր կողմեր, էտ էլ ա թաքավորն ու ժողովուրդը. եթե մի երկրում համերաշխություն չլինի, էն երկրում գործը առաջ չի գնա: Իսկ երրորդը, որ վանքի գլխից փուչ պոպոք են թափում, էտ էլ ա թաքավորն ու ժողովուրդը. թաքավորները կգան-կգնան, համա ժողովուրդը վանքի նման

³³ Նույն տեղում:

³⁴ ՀԺՀ, հ. V, էջ 340-342:

³⁵ Նույն տեղում, էջ 340:

³⁶ Նույն տեղում, էջ 341:

³⁷ Նույն տեղում:

³⁸ «Հրեղեն ձին», մշակեց եւ վերապատմեց Ս. Վարդանյանը, Երևան, 1981, էջ 92:

Հաստատուն կմնա: Էս են իմ երեք գաղտնիքները, բա աշխարհ ես ղեկավարում էդպես փուչ գլխով»³⁹:

Ինչպես Սողոմոն իմաստունի, այնպես էլ իմաստուն բժշկապետ Լոխմանի պարագայում հասարակ մարդիկ հաճախ հարաբերվում են վերոնշյալ իմաստունների հետ եւ հաղթող են դուրս գալիս:

«Լողմանն ու հասարակ մարթը»⁴⁰ հեքիաթից պարզվում է, որ բժիշկ Լոխմանը հասարակ մի գյուղացուց է սովորել օձի թույնից դեղ պատրաստելու գաղտնիքը. «Էտ հասարակ մարթն ա լողմանն սրվրցըրալ լի՛ր, վեր օխձեն լղեն նեստա կարելի ա ճար սարքել, մարթ բուժել»⁴¹:

Մեկ այլ՝ «Լողմանին դարդի վա կյամ»⁴² հեքիաթում հասարակ մարդու տղան, համր ու անընդունակ ձեւանալով, աշակերտում է Լոխմանին եւ յուրացնելով բժշկության գաղտնիքները՝ գերազանցում է անգամ մեծ բժշկապետին:

«Սողոմոն իմաստունն ու հնձվորը»⁴³, «Սողոմոն իմաստունն ու բիձեն»⁴⁴ զրույցներում Սողոմոն արքան հարցեր է տալիս վերոնշյալ գյուղացի մարդկանց եւ հիանում նրանց խելքով ու տրամաբանությունը: Սողոմոնի այն հարցին, թե ծառ տնկող «բիձեն» արդյոք ճաշակելով է այդ ծառի պտուղները, գյուղացին պատասխանում է. «Տնգել են՝ կերել եմ, տնգում եմ, որ ուտեն»⁴⁵:

Զրույցներից մեկում ծայրաստիճան աղքատ մի գյուղացի Սողոմոնին ասում է. «Իմաստուն Սողոմոն, հինգ կոտ ցորեն ունեմ, ցանե՞մ, թե ուտեմ»⁴⁶: Մինչ Սողոմոնը պատվիրում է ցանել, նրա որդին ընդդիմանում է. «Հայրիկ, մարթը մեռնելու վրա է, թող չցանե, թող ուտե»⁴⁷: Գյուղացին, Սողոմոնին լսելով, ցորենը ցանում է: Որոշ ժամանակ անց Սողոմոնն ու որդին գնում են ման գալու եւ մտնելով գյուղացու արտը՝ հոտ են առնում: Տեսնում են, որ քաղցած գյուղացին արտում մահացել է: Որդին մեղադրում է իմաստուն հորը. «Հայրի՛կ, էսիկ քու բերնի ֆոտն է: Ըսիր ցա-

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը, Երևան, 2004, էջ 156-158:

⁴¹ Նույն տեղում, էջ 158:

⁴² ՀԺՀ, հ. VII, էջ 48-51:

⁴³ «Թագավորի երագները» (բանահյուսական ժողովածու), Կազմեց, ծանոթագրեց եւ հրատարակության պատրաստեց Ս. Վարդանյանը, Երևան, 2003, էջ 17:

⁴⁴ «Հրեղեն ձին», էջ 94:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., թ. 794 Բ., էջ 341:

⁴⁷ Նույն տեղում:

նե-ցանեց, մեռավ, հոտավ»⁴⁸: Արդարադատ Սողոմոնը, առանց վարանելու, ընդունում է իր սխալը՝ գերապատվությունը տալով որդու կարծիքին. «Իմաստուն Սողոմոնն իմացավ, օր տղի իմաստութենը իրենեն չատ էր»⁴⁹:

Թվում է, թե ամենաանշան միջատը մրջյունն է, բայց ժողովուրդը հաճախ աշխատասեր միջատին դարձնում է Սողոմոն արքայի ընդդիմախոսը: «Սողոմոնն եւ մրջյունը»⁵⁰ զրույցում Սողոմոնը «...երբ թագաւորական գահ բարձրացաւ, ամենն էլ՝ չորքոտանիք, թռչուններ, ձկներ, միջատներ ընծաներով եկան նրա գահակալութիւնը շնորհաւորելու: Ամենն էլ կարգով շարուեցին: Բոլորից վերջը լոյս ընկաւ մրջիւնը. բերանում բռնած, ընծայ էր բերում ճպուռի ազդերը. այդ ահագին բեռով բարձրացաւ գահը, այնտեղից էլ Սողոմոնի ձեռի երեսը եւ իրա ընծան դրեց այնտեղ: Իմաստուն թագաւորը նայեց քրտնքում մտած փոքր միջատին, նրա վերցրած մեծ բեռանը ու ժպտալով հարցրեց. «Ե՞ս եմ մեծ, թէ դու»: «Իհարկէ որ ես», - պատասխանեց մրջիւնը: «Ինչպէ՞ս»: - «Ահա թէ ինչպէս. առաջինը՝ դու թէպէտ իմաստուն թագաւոր ես, բայց նստած ես այնպիսի գահի վրայ, որ քեզանից քիչ արժէք ունի, իսկ ես, որ չնչին միջատ եմ, ահա բազմած եմ քեզ պէս թագաւորի վրայ, որ ընդարձակ աշխարհի կառավարիչ է: Երկրորդ՝ եթէ մէկը համարձակոււմ է քո կամքի հակառակ բան անել, իսկոյն հրամայում ես նրան պատուհասել, իսկ ինձ՝ ինչքան էլ վշտացնում նեղացնում են, բոլորին էլ համբերում, ներում եմ: Վերջապէս երրորդ՝ ուրիշ մարդկանց պէս դու եթէ մի քանի ժամ աշխատում ես, երկու այնքան հանգստանում ես, իսկ ես ամբողջ կեանքս անց եմ կացնում աշխատանքի մէջ ու չեմ իմանում՝ ի՞նչ բան է հանգստութիւնը կամ յոգնութիւնը»⁵¹:

«Սողոմոն իմաստուն»⁵² զրույցում Սողոմոնը ապակե անոթի մեջ բանտարկում է մի մրջյունի՝ հետը մի հատ ցորեն: Մի տարի հետո նա բացում է անոթը եւ տեսնում, որ մրջյունը դեռ կենդանի է, իսկ ցորենի հատիկի միայն կեսն է կերված: Պատժված հեռատես մրջյունը, ի զարմանս իմաստունի, պատասխանում է. «Տեր, մտածելով, որ քո բարկութիւնը կարող է երկու տարի տեւել, դրա համար էլ ցորենի միայն կեսը կերա, մնացածը պահելով հաջորդ տարվա համար»⁵³: Ժողովրդական զրույցն աղերսվում

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Ս. Քամալեանց, նշվ. աշխ., էջ 36-37:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., թ. 794 Ա., էջ 340-341:

⁵³ Նույն տեղում:

է Աստվածաշնչյան մեկ այլ առակի հետ, որով Սողոմոնը դաստիարակում է ծուլներին՝ մրջյունին օրինակ բերելով, քանզի նա ոչ հողագործ է, ոչ վերակացու եւ ոչ էլ գլխին տեր ունի, բայց «իր կերակուրը ամառուընէ կը պատրաստէ, իր ուտելիքը հունձքի ատեն կը ժողվէ», հակառակ դեպքում՝ աղքատությունը, ինչպես չար ուղեւոր, կհասնի ծուլին, եւ կարիքը, իբրեւ ժիր սուրհանդակ, կկանգնի նրա դռանը⁵⁴. «Ո՛վ ծոյլ, մրջինին՝ն գնա. անոր ճամբաները տե՛ս ու իմաստուն եղիր»⁵⁵:

Սողոմոն իմաստունին վերագրված գրքերի բացառիկ հեղինակության եւ դրանց հինկտակարանային հարակցումների մասին է վկայում Չարսանճագից գրառված «Ճամին քաղաքը եւ շղթայահատ»⁵⁶ հրաշապատում հեքիաթը, որտեղ արքայադուստրը ջրային ոգիներից (ջրի աղջիկներ) պատուհասված իր սիրածին կարողանում է փրկել՝ ժամեր շարունակ «Սողոմոնու գիրքը կարդալով». «Թագավորին աղջիկը ճըզ քաշեց, հանեց ծոցուն գիրքը օր Սողոմոն իմաստունին իսկի գրած գիրքն էր, իսկի ձեռաց գիրքն էր, օր անցեր էր էդոր ձեռքը»⁵⁷:

«Սողոմոն իմաստունը, որ տեսաւ թէ դեւերը հակառակ են ու իր կամքը չեն կատարում, բոլորին լցրեց պղնձե կուժերի մէջ ու բերանները ամուր փակելով, իր մատանիքով կնքեց ու թափեց ծովը: Այդ չարերը այնքան պէտք է մնան ծովում, մինչեւ որ Քրիստոս դատաստան գայ»⁵⁸: Այս պատկերացումներն իրենց արտահայտությունն են գտել նաեւ հայ գեղարվեստական արձակում: «Արություն եւ Մանվել» վեպում Սողոմոնն այնքան իմաստուն էր, որ երբ Քրիստոսը նրան թողնում է դժոխքում, նա իր իմաստությունը դժոխքում էլ է գործածում: Սատանաների այն հարցին, թե ինչ է չափում, չափչփում, Սողոմոնը պատասխանում է, թե նրանց համար գերեզմանատեղ է պատրաստում: Սարսափահար սատանաները հավաքվում են եւ Սողոմոնին դժոխքից վտարելով՝ դնում են դրախտի ճանապարհին⁵⁹:

⁵⁴ Առակ. Զ. 6-11:

⁵⁵ Առակ. Զ. 6:

⁵⁶ ՀԺՀ, հ. XVI, էջ 380-396:

⁵⁷ Նույն տեղում, էջ 392: Ըստ Բենսեի՝ Բուլանըխից կատարած գրառումների՝ «Մեծ հաւատք կրնձայուի կախարդութեան, որոյ ներկայացուցիչներն են՝ «Սողոմոնի», «Ախտարք», «Վեցհազարիկ» կարդացող թղթաբացները: Կախարդութեան նորա համար շատ կը հաւատան, որովհետեւ Սողոմոն իմաստունը եղած է հեղինակը «Վեցհազարիկ» եւ այլն գրքերու» (Բենսե, Բուլանըխ կամ Հարք գաւառ, ԱՀ, գիրք Զ., Թիֆլիս, 1900, էջ 14-15):

⁵⁸ Ա. Մխիթարեանց, Նախապաշարմունքներ, ԷԱԺ, հ. Ա., Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 200:

⁵⁹ Ղ. Աղայան, նշվ. աշխ., հ. I, էջ 24-25:

Հայ բանահյուսության մեջ լայն տարածում գտած հեքիաթային դիպաշարերից մեկը դարձյալ սերում է Հին Կտակարանից, որի համաձայն՝ երկու անառակ կանայք ծննդաբերում են մի տան մեջ եւ երկուսն էլ տղա երեխա են ունենում: Կանանցից մեկը անզգուշորեն պառկում է իր երեխայի վրա եւ գիշերը նրան մեռած տեսնելով՝ դնում է քնած կնոջ ծոցում, իսկ նրա կենդանի որդուն տեղափոխում է իր մոտ: Առավոտյան կիներն արթնանում է քնից եւ տեսնում, որ մահացածը իր երեխան չէ: Այսպես վիճելով՝ նրանք կանգնում են Սողոմոն արքայի առջեւ: Արքան հրամայում է, որ սուր բերեն, կտրեն՝ երկու մասի բաժանեն կենդանի ծծկեր մանկանը եւ մասնատված տան կանանց: Նա, ով երեխայի մայրն էր, աղաղակում է, որ կենդանի մանկանը տան նրան, միայն թե չսպանեն. «Ո՛վ տէր իմ, ողորմէ ինձի, ողջ տղան անո՛ր տուէք, ու զանիկայ մի մեռցընեք»⁶⁰: Իսկ մյուս կինը պահանջում է՝ երեխային կիսեն, որ ոչ իրենը լինի, ոչ նրանը: Սողոմոն իմաստունը վճռում է, որ երեխայի մայրը նա է, ով հրաժարվեց երեխայից, միայն թե նրան չկիսեն: Լսելով արքայի վճռած դատաստանի մասին՝ ամբողջ Իսրայելը երկնչում է արքայից, քանի որ նրա մեջ դատաստան վարելու՝ Աստծո իմաստնությունն է տեսնում⁶¹: Աստվածաշնչյան այս սյուժեն գրեթե նույնությամբ սնել է ժողովրդական բանահյուսությանը. որոշ պատումներում վճիռ կայացնող արքան Սողոմոնն է, երբեմն էլ՝ պարզապես իմաստուն մի թագավոր⁶². «Էդ կնանքը կռեվ ըն անում, ծկըլթում, էն մինը ասում ա սաղը իմ խոխաս ա, մեռածը՝ ուրանը, էն մինն էլ ասում ա, սոտ ա ասում, սաղը իմ խոխաս ա, մեռածն ա ուրանը: Սուղոմունն իմաստունը ասում ա. «Շուտ ըրեք, մին խանչալ պիրեք, էդ խուխեն էրկու կես ըրեք, պըժինեցեք տահանց մեչին, թող քինան: Էդ վախտը խուխեն հալալ մարը մագերը քանդում ա, թա իմ խուխես լավա տաք տրան, մինակ թա սպանիք վեչ»⁶³: Թե՛ աստվածաշնչյան եւ թե՛ բանահյուսական սյուժեում վեճը հանգուցալուծվում է արքայի իմաստուն վճռով՝ երեխայի մայրը նա է, ով թույլ չի տալիս սպանել իրենից ծնվածին:

Սողոմոնի մասին հեքիաթներում մեծ մասամբ խաղարկվում են իմաստունի տեսած երազները, որոնք մակաբերվում են Աստվածաշնչյան

⁶⁰ Գ. Թագ. Գ. 16-28:

⁶¹ Գ. Թագ. Գ. 28:

⁶² Բարխուդար Ղազիյանի անձնական արխիվ, Արցախ (Հադրութ), տետր 3, թերթ 7-8 («Սուղոմուն Բմաստունն սուրը»), թերթ 11-13 («Թաքավերեն փոսած դատը»), 1998: Այս աղբյուրի համար շնորհակալ ենք բանագետ Ա. Ղազիյանին:

⁶³ Նույն տեղում, թերթ 8:

տեքստերից: Սողոմոնը նստեց իր հոր՝ Դավթի գահին, երբ ընդամենը տասներկու տարեկան էր: «Տէրը Սողոմոնին երեւցաւ գիշերուան երազով եւ ըսաւ. Բա՛ն մը խնդրէ, որ քեզի տամ»⁶⁴: Հենց երազի մեջ էլ Սողոմոնը Աստծուց աղերսեց ոչ թե հարստություն, ուժ, երկարակեցություն ու մահ թշնամյաց, այլ՝ իմաստություն, քանի որ ինքը դեռ պատանի էր ու չգիտեր իր անելիքը. «...բայց ես պզտիկ տղայ մըն եմ, ելել ու մտնել չեմ գիտեր», «ուստի քու ծառայիդ իմաստուն սի՛րտ տուր, որ քու ժողովուրդդ դատէ ու բարին ու չարը որոշէ. քանզի աս քու մեծ ժողովուրդդ ո՞վ կրնայ դատել»⁶⁵:

Սողոմոնի այս խնդրանքը «Տէրոջը աչքերուն հաճոյ երեւցաւ», եւ Տէրը նրան տվեց նաեւ այն, ինչը որ Սողոմոնը չխնդրեց՝ հարստություն ու փառք: «Ահա՛ քու խօսքիդ պէս ըրի. ահա՛ քեզի իմաստուն ու հանճարեղ սիրտ տուի, այնպէս որ քեզմէ առաջ քեզի պէս մէկը եղած չէ, ու քեզմէ ետքն ալ քու նմանդ պիտի չելէ»⁶⁶:

Տերն այս շուայության դիմաց պատանի արքայից պահանջեց հավատարմորեն կատարել իր հրամաններն ու պատվիրանները, ինչպէս իր հայր Դավթիթը՝ խոստանալով երկարացնել Սողոմոնի կյանքի օրերը:

«Վասն հպարտութեան» կարգացվող քարոզներում ուշագրավ է միջնադարյան մի զրույց, որն ունի լատինական, հնդկական, լեհական, ռուսական փոփոխակներ⁶⁷, իսկ հայկական տարբերակների մի մասը կապվում է Սողոմոն իմաստունի (տարբերակ՝ Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսոր⁶⁸, Հայոց արքա Տրդատ) անվան հետ, զորօրինակ՝ «Պատմութիւն Սողոմոնի վասն հպարտութեան»⁶⁹, «Վասն հպարտութեան. տե՛ս թէ Սողոմոն իմաստունն ինչ քաջեց»⁷⁰, «Հպարտ թագաւոր» (Թագաւոր մի նստեալ կայր յաթոռ իւր...) ⁷¹ եւ այլն: Իսկ Ասրնե-Թոմփսոն-Ուլթերի հեքիաթների միջազգային նշացանկի ATU-757 տիպին համապատասխանող «Մեծամիտ թագավորը» (Կայսրի գոռոզությունը պատժվում է) վեր-

⁶⁴ Գ. Թագ. Գ. 5-6:

⁶⁵ Գ. Թագ. Գ. 7-9:

⁶⁶ Գ. Թագ. Գ. 10-13:

⁶⁷ А. Веселовский, Собрание сочинений, т. VIII, выпуск I, 1921, Петроград, с. 66.

⁶⁸ Ըստ Աստվածաշնչի՝ Նաբուգոդոնոսոր թագավորը նույնպես մեծամտության պատճառով հայաձվում ու վտարվում է մարդկանցից, ինչպես արջառ՝ նա խոտ էր ուտում, եւ նրա մարմինը թրջվեց երկնքի ցողից, մինչև որ նա զղջաց, ներումն խնդրեց Աստծուց եւ առաջվա պես վերադարձավ իր թագավորական պատվին (Դան. Գ. 25-34):

⁶⁹ ՄՄ, ձեռ. թ. 6951, թ. 134ա:

⁷⁰ ՄՄ, ձեռ. թ. 4618, թ. 132 բ:

⁷¹ «Էջերի հայ միջնադարյան գեղարվեստական արձակից», խմբագրությունը եւ առաջաբանը՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1957, էջ 113:

տառությամբ հայկական հեքիաթախումբը, հավելյալ մոտիվներով հանդերձ, հանգում է հետեւյալին. Աստված պատժում է մեծամիտ, անխիղճ թագավորին (հարուստին). ուղարկում է իր հրեշտակին, որը բաղնիքում հագնում է թագավորի շորերը, ներկայանում նրա փոխարեն (հարստությունը առնում է ձեռքից): Բաղնիքայինները մերկ թագավորին սատանայի տեղ են դնում: Նախկին թագավորը գնում է նոր թագավորի հիմնածաղքատանոցը, հրեշտակին խոստովանում իր մեծամտությունը: Դառնում է բարեպաշտ:

1. Մեծամիտ հարուստը պատժվելով՝ գնում է այլ երկիր, դառնում թագավորի վեզիրը, հետո՝ թագավորի սպասավորը, զղջում սխալների համար, ամուսնանում վեզիրի աղջկա հետ:

2. Թագավորը սիրահարվում է պատժված հարուստի կնոջը, սակայն վերջինս մերժում է թագավորին՝ չզավաճանելով բարեպաշտ ամուսնուն⁷²:

Վերոնշյալ հեքիաթներն ու զրույցները, աննշան տարբերություններով, հանդես են գալիս հետեւյալ դիպաշարով. ակնազարդ գահույճին բազմած Սողոմոնը օրը երկու անգամ բարեգործական ճաշ էր տալիս աղքատներին ու կարոտյալներին եւ դիտում էր, թե հպատակները ինչպես են փութով կատարում իր հրամանները:

Սողոմոն արքան մտքում սկսում է հպարտանալ, թե ինքը Աստծո նման է, դեռ խոսքը բերանում՝ ամեն ինչ կատարում են: Որոշ տեքստերում, ինչպես օրինակ՝ «Հպարտ թագաւոր»⁷³ զրույցում, այլոժեն նույնությամբ պատմվում է, բայց թագավորի անունը չի նշվում. «Ես Աստուծոյ նման եմ, որ՝ զինչ խօսք ի բերանոյս կե՛նէ, ամէնն կատարի»⁷⁴: «Մեծամիտ թագավորը»⁷⁵ հեքիաթում նույնպես «Թագավորըմ կէղնի: Օրըմ կնստի ուր քոչկ ու սարի մեջ ու ինքն ուրեն կմեծամտի: Կասե. «Աստված ընծիկ ի՞նչ կառնա էնե, ես զաթի արեւելոց, արեւալատ տիրեր իմ, շատ-շատ պիտի հե՛նի ազգըմ, հանե վրը ընծիկ, զէն լե հոգ չըմ էնի, իմ խազինեք հըմալ լցուկ ին, կլնամ բերան ուրանց, զձեն ուրանց կկտրեմ»⁷⁶:

Սողոմոնի սնափառությունը Աստծուն դուր չի գալիս, եւ նա իր հրեշտակին, խիստ քաղցած աղքատի կերպարանքով, ուղարկում է բարեգործական ճաշի: Երբ կերակուր բաշխողն ասում է, որ պիտի համբերի, քանի

⁷² ՀԺՀ, հ. XI, էջ 281-284 (Տոբոլսկերան-Հարք), հ. XIII, էջ 375-378 (Մուշ) եւ այլն:

⁷³ «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից», էջ 113:

⁷⁴ Նույն տեղում, էջ 110:

⁷⁵ ՀԺՀ, հ. XIII, էջ 375-378:

⁷⁶ Նույն տեղում, էջ 375:

որ դատարկ աման չկա, «Հրեշտակի շոր մտած» աղքատը, անչափ անոթի լինելով, հորդորում է կերակուրը լցնել գետնին:

Շքախմբով բաղնիք գնալիս Սողոմոնը տեսնում է աղքատին, բարկանում է, որ նա անասունի պես գետնից է ուտում, եւ խոհարարին հրամայում է նրա նմաններին կերակուր չտալ: Երբ Սողոմոնը բաղնիքում հանում է իր շորերը, հրեշտակը, Աստծո կամոք, հագնում է նրա շորերը եւ բոլորի կողմից թագավորի տեղ դրվելով՝ վերադառնում պալատ: Սողոմոնը մնում է մենակ, առանց հագուստի: Ոչ ոք նրան թագավոր չի ճանաչում: Սողոմոնը ստիպված հագնում է աղքատի մագեղեն շորերը եւ գնում այնտեղ, որտեղ ծառաները բարեգործական ճաշ էին բաժանում: Նայում է իր ակնազարդ գահույժին նստած մարդուն, դառնապես լացում է եւ ոչինչ չի կարողանում ասել, իսկ խոհարարը կերակուրը թափում է գետնին՝ ասելով, որ նա սովոր է անասունի պես գետնից ուտել:

Քաղցած Սողոմոնը, այն աղքատի պես գետնից լիզելով, ագահորեն ուտում է կերակուրը եւ երբ վերեւ է նայում, տեսնում է, որ հրեշտակն անհետացել է, իսկ իր արքայական հանդերձը մնացել է դատարկ: Այնժամ Աստված ապաշավող Սողոմոնին վերադարձնում է նախկին տեսքը եւ բազմեցնում գահույժին: Իսկ Սողոմոնը, հրաժարվելով սնապարծությունից, բոլոր մարդկանց նկատմամբ դառնում է բարեհաճ ու ողորմած⁷⁷: Այսպիսին է Սողոմոն Իմաստունը՝ ժողովրդական պատկերացումների համաձայն:

Ըստ Աստվածաշնչի՝ Սողոմոն արքան թուլություն ուներ կանանց նկատմամբ. 700 կին ու 300 հարձ ունեցող Սողոմոնն իր կանանցից մեկին չափազանց շատ էր սիրում («Իմ աղաւնիս, իմ կատարեալս մէկ է») ⁷⁸, ինչն իր անդրադարձն է գտել նաեւ «Իմաստուն բու» ⁷⁹, «Սողոմոն Իմաստուն» ⁸⁰ եւ այլ բանահյուսական տեքստերում ⁸¹: Վերոնշյալ հեքիաթ-զրույցի սիրված լինելու մասին են վկայում Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից գրառված բազմաթիվ փոփոխականները, որոնց ընդհանրական սյուժեն հետեւյալն է. Սողոմոն Իմաստունի ամենասիրելի կինը համոզում է արքային, որ իր հրամանով բոլոր թռչունները ներկայանան եւ թափեն իրենց փետուրները (տարբերակ՝ ոսկորները ⁸²), որպես-

⁷⁷ ՄՄ, ձեռ. 6951, թ. 134 ա. ձեռ. 4618, թերթ 132բ:

⁷⁸ Երգ երգոց Զ. 9:

⁷⁹ Ս. Քամալեանց, նշվ. աշխ., էջ 35-36:

⁸⁰ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., թ. 794 Դ., էջ 341-342:

⁸¹ Նույն տեղում, թ. 794 Դ., Ե., Զ., Է., Ը., էջ 341-347:

⁸² Նույն տեղում, թ. 794 Ե., էջ 342:

զի դրանցից իր համար պալատ (տարբերակ՝ նորածնի օրորոց⁸³) շինեն.
«Ամենից վերջը գալիս է բուն:

- Չարագույժ բու, - ասում է Սողոմոնը, - ինչո՞ւ ուշացար:

- Տեր արքա, - պատասխանում է բուն, - իմ երամի բոլոր թռչունների հետ կարեւոր ժողով ունեի, դրա համար էլ ուշացա:

- Ի՞նչ ժողով, - հարցնում է արքան:

- Վիճում էինք, թե մարդկային ցեղի մեջ մեռնողներն են շատ, թե ապրողները:

- Բնական է, որ ապրողները շատ են, - ասում է արքան:

- Ո՛չ, տեր արքա, մեր մեծամասնության կարծիքն այն է, որ մեռնողները շատ են, որովհետեւ կնոջից խաբվածն էլ մեռած հաշվեցինք, - ասում է բուն:

Այս պատասխանի վրա Սողոմոն Իմաստունը հրամայում է բոլոր թռչուններին՝ առանց փետուրները թափելու ետ դառնալ: Չղջիկը, որն արդեն թափել էր փետուրները, դրանից հետո մնում է անփետուր⁸⁴:

«Տիրոջ կողմից ծովեզերքի ավազի չափ լայնախոհություն ստացած Սողոմոնը»⁸⁵, այնուամենայնիվ, խաբվում է կնոջից եւ մի «քուռ բուրի» հանդիմանություն Գիտակցում է սեփական արարքների անհեթեթությունը. «Ապա դու էսա խավքեր ժողովեր ես, բեկրներ մոտեն կառիս. էրուն թռչունաց բեկրներն բերդ կու շինիս զքու կնկա հապով. վաղն օր թա Սամել քամին (սամում) հելավ, զբեկրներ կու տանի, աշխարմ կու հանն դուս, դու կու մնաս մեղաց տակ: Քենի օ դու կնկա խափած էս, դու էլա մեռել ես:

- Աֆարիմ (կեցցես) քուռ բուվ. ապրիս դու քուռ բուվ...»⁸⁶:

Ըստ Աստվածաշնչի՝ Սողոմոնը կնության առավ Փարավոնի դստերը: Ժողովրդական զրույցներից մեկի համաձայն՝ Սողոմոնը ամուսնանում է Փարավոնի կռապաշտ աղջկա հետ, որը ոչ միայն թռչունների փետուրներից պալատ էր ուզում, այլեւ խորամանկորեն պարտադրում էր Սողոմոնին՝ իր աստծուն երկրպագել: Սկզբում Սողոմոնն ընդդիմանում է՝ ասելով. «Ես աստված օնիմ, ես օրիշ աստծու երկրպագութուն չիմ տալ», հետո կնոջ կամքը կատարելու համար որոշում է կնոջ կուռքի դիմաց ձիու մտրակը դիտավորյալ վայր գցել եւ ապա այն բարձրացնելով՝ նրա աստծուն երկրպագելու տպավորություն ստեղծել: Հենց այդ պահին էլ նա

⁸³ Ս. Քամալեանց, նշվ. աշխ., էջ 25-26:

⁸⁴ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., թ. 794 Դ., էջ 341-342:

⁸⁵ Գ. Թագ. Ե. 29:

⁸⁶ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., թ. 794 Զ., էջ 343-344:

Հանկարծ հոգով ու մարմնով կորչում է. «Մհենգ էս սհաթս ալ Սուղու-մուն Իմաստունեն տեղը մահչում չի, գիտացվալ չի՝ քամե՞ս տեռալ, հինչ ա տեռալ»⁸⁷:

Թեեւ Տերը պատվիրել էր, որ խրայելացիները չխառնվեն օտարների հետ, որպեսզի օտարները նրանց սրտերը չմոլորեցնեն եւ իրենց կուռքերի ետեւից չտանեն, բայց Սողոմոնը հարեց նրանց՝ սեր տածելով⁸⁸: Նա կնության առավ այլ ազգերի պատկանող բազմաթիվ օտար կանանց, ովքեր հատկապես ծերության ժամանակ խոտորեցին նրա սիրտը, խավարեցրին հոգու հայեցողությունը: Դրա համար էլ, ժողովրդական զրույցի տրամաբանությամբ, Սողոմոնն անհայտ կորավ⁸⁹:

Սողոմոնը չպահեց Աստծո պատվիրանները, եւ քանի որ կռապաշտությունն ու անհավատարմությունը կործանում են ազգին, Տերը բարկացավ Սողոմոնի վրա, խլեց թագավորությունը նրա ձեռքից եւ թույլ տվեց, որ այն կազմալուծվի ու քայքայվի⁹⁰:

«Մատյան ողբերգություն» 48-րդ գլխում (Բան ԽԸ.) Գրիգոր Նարեկացին վհատված տարակուսում է, թե ինքն ինչպես կարող է գերծ մնալ սայթաքելուց, երբ ընտրյալ զավակ Սողոմոնն անգամ մոլորվեց, համակվեց կեղծ կուռքերի պաշտամունքով, վայելչազրկվեց հռչակից. «Ինչպե՞ս անարգվեց փառավորն հանկարծ»: Միանալով Սողոմոնի ողբահառաչ աղերսանքներին՝ Նարեկացին փրկություն է խնդրում Բարձրյալից.

Նա, որ ոչ այնքան մեղանչեց, որքան զոջաց դառնորեն,
Թող որ լիովին չպախարակվի, այլ հիշվի սիրով...
Հիշելով բարի խրատները իր՝
Ներվածների հետ նորոգի՜ր նրան,
Որն ամենահամ, ախորժաճաշակ
Եվ բազմապաճույճ առակագրությամբ,
Իր մատյաններով լուսազարդ ու ճոխ
Աստվածությունդ միայն քարոզեց
Եվ ժողովրդին ցույց տվեց, ի՞նչ Հայր,
Խոստովանությամբ քեզ մոտենալու բարի ճանապարհ⁹¹:

⁸⁷ Նույն տեղում, թ. 794 Է., էջ 344-346:

⁸⁸ Գ. Թագ. ԺԱ. 1-3:

⁸⁹ «Ղափանի աանդություններից», հաւաքեց Արքայիկ, ԱՀ, XIX գիրք, 1910, թ. 1, Թիֆլիս, էջ 92-94:

⁹⁰ Գ. Թագ. ԺԱ. 9-13:

⁹¹ Գ. Նարեկացի, Մատյան ողբերգության, թարգմանությունը՝ Վազգեն Գետրգյանի, Երեւան,

Ամփոփելով Սողոմոն իմաստունին վերաբերող բանահյուսական (կրոնաժողովրդական) ձեռագրական եւ հինկտակարանային աղբյուրների հարակցումները՝ կարող ենք ասել.

1. Հայ ժողովրդական հեքիաթներում ու առակատիպ զրույցներում, եթե անգամ Սողոմոնի անունը չի նշվում, իմաստուն թագավորի կերպարն անպայման իր մեջ նրբագծեր է ներառում աստվածաշնչյան Սողոմոնից, ում լայնախոհության՝ անաչառ դատելու, կենդանիների ու թռչունների լեզուն հասկանալու, ճիշտը ստից զատելու համբավը տարածված էր ինչպես ընդհանուր, այնպես էլ հայ քրիստոնեական մշակույթում:

2. Աստծո կամքը զանազան ճանապարհներով սփռված է Սուրբ Գրքում, եւ ընտրողը մարդն է, ով, երկրավոր հաջողությունների մասին մտածումներին տրվելով, հաճախ շեղվում է ճշմարտությունից:

3. Այսպես էր նաեւ Սողոմոն իմաստունի պարագայում, ում անվան շուրջ հյուսված ժողովրդական բանահյուսությունը համախոս է աստվածաշնչյան պատգամին, որ «յուրաքանչյուրն իր մասին խորհի զգաստությանմբ եւ իրեն չգնահատի ավելի, քան ինչ որ է իր արժանիքը»⁹², քանզի «թագաւորներից ոչ ոք ուրիշ սկիզբ չի ունեցել. աշխարհը մէկ մոտք ունի բոլորի համար եւ մէկ ընդհանուր ելք»⁹³:

РЕЗЮМЕ

Распространение имени и славы Соломона в христианском мире и, в частности, в Армении обусловлено библейскими мотивами. Согласно Ветхому Завету, Соломон был сыном царя Давида и вокруг его имени сплетены многочисленные предания и сказкоподобные басни, которые известны в разных историко-этнографических регионах Армении и дошли до нас как в устной традиции, так и в рукописях. Самые популярные из них - «Секреты царя Соломона», «Царь Соломон и пахарь», «Царь Соломон и старик», «Рассказ о гордости царя Соломона», «Высокомерный царь», «Сон царя Соломона» и другие. В армянских народных сказках и сказаниях почти всегда образ мудрого царя своими характерными чертами напоминает библейского Соломона (даже если имя Соломон не упоминается), который славился беспристрастным судейством, широким кругозором, понимал язык животных и птиц, а молва о его умении отличать правду от лжи была популярна не только в общей, но и в армянской христианской культуре.

2005, էջ 322-323. «Մատենագիրք Հայոց», հ. ԺԲ., Ժ. դար, Երևան, 2011, էջ 310-311:

⁹² Հոմ. ԺԲ. 3:

⁹³ Իմաստ. Է. 5-6:

SUMMARY

In the Christian world, and particularly among the Armenians, the name and the fame of Solomon is based on the Holy Bible motifs. According to the Old Testament, Solomon is the son of David, and there are innumerable stories and tale-like fables about him collected from different regions of Armenia both in oral tradition and in manuscripts. Some of them are: “The Secrets of Solomon the Wise”, “Solomon the Wise and the Reaper”, “Solomon the Wise and the Old Man”, “Story about Solomon’s Pride”, “The Arrogant King”, “Solomon’s Dream” and many others. In Armenian folktales and fables the character of the wise king necessarily involves similarities with Solomon the Wise (even if Solomon’s name is not mentioned). His well-known personal features such as broadmindedness, unbiased judging, sorting truth from lies, ability to understand the language of animals and birds and others were widespread in common, as well as in Armenian Christian culture.

